ՀԱՅ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԿՈԹՈՂԸ

(Նիկոլ Դումանի «Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանության» ձեռնարկը[1])

Հայոց պատմությունը հարուստ է պատերազմներով, ճակատամարտերով ու պարտիզանական կռիվներով: Մեզ են հասել բազմաթիվ տաղանդավոր զորավարների և զինվորականների անուններ, նրանց սխրագործությունների մասին պատմություններ: Պահպանվել են նաև պատերազմների և ճակատամարտերի նկարագրություններ, որոնք խոսուն վկայություններն են հայ ռազմագիտական տաղանդի:

Հայ ռազմագիտական միտքը բազում բոցավառումներ է ունեցել, սակայն տեսագործնական ռազմագիտության ասպարեզում, ցավոք, հայկական միտքն արգասաբեր չի եղել, թղթին չեն հանձնվել ռազմի դաշտում ձեռք բերված համապատասխան հմտությունները: Այդ իսկ պատճառով հատկապես կարևորվում է հայ ռազմագիտական մտքի տեսագործնական այնպիսի մի բացառիկ ստեղծագործություն, ինչպիսին Նիկոլ Դումանի «Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանության» աշխատությունն է:

Նիկոլ Դումանը 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի հայ ազատամարտի նվիրյալների փաղանգի ամենաերևելի դեմքերից է, իսկ «Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանության» աշխատությունը՝ նրա ավելի քան 20-ամյա հայդուկային գործունեության թագն ու պսակը, մարտերում ձեռք բերված փորձի ամփոփումը, որը հայ իրականության մեջ բացառիկ երևույթ է:

Աշխատությունը կոթողային արժեք ունի, քանի որ գործնականում ապացուցել է իր ռազմավարական արդյունավետությունը՝ 20-րդ դարի սկզբին՝ որպես դասագիրք ծառայելով հայրենիքի ու ժողովրդի պաշտպանության համար մարտնչած բազմաթիվ զինվորականների համար և իր ներդրումն ունենալով դեպի անկախ պետականություն ընթացող հայության հաղթանակներում:

* * *

1905 թ. ցարական իշխանությունների հովանավորությամբ հայերին կոտորելու և նրանց ունեցվածքին տեր դառնալու սեփական նկրտումներն ի վերջո կյանքի կոչելու հնարավորություն ստացած կովկասյան թաթարները (այժմ՝ ադրբեջանցի կոչված) հարձակում են նախապատրաստում Բաքու քաղաքի հայերի վրա: Հայության ինքնապաշտպանությունը կազմակերպում է Հայոց պատմության ամենանվիրական ու լուսավոր հերոսներից մեկը՝ Նիկողայոս Տեր-Հովհաննիսյանը, հայտնի Նիկոլ Դումանը[2]:

---

[1] Տե՛ս Նիկոլ Դուման, Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանութեան (հայ ժողովրդի երեք գլխաւոր հատուածների համար), 1907: Վերահրատարակությունը տե՛ս «Դեպի երկիր» մատենաշար, թիւ 10, Ե., 1992: Հղումները կատարված են վերջին հրատարակությունից:

[2] Նիկոլ Դումանի մասին մանրամասնորեն տե՛ս Հ. Գևորգյան, Նիկոլ Դուման, Ե., 2013:

Նա փառքով իրականացրեց իր պատմական առաքելությունը՝ կասեցնելով թաթարների հարձակումը և նրանց ետ շպրտելով ելման դիրքեր: Քաղաքի տասնյակ հազարավոր հայերը փրկվեցին[1]:

Բաքվի դեպքերից հետո զինակիցները Նիկոլ Դումանին առաջարկեցին հաշվի առնելով ձեռք բերված փորձը, պատրաստել ինքնապաշտպանության ուղեցույց[2]: Այդպես ծնվեց «Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանության» ռազմագիտական աշխատությունը:

Աշխատությունը բաղկացած է ներածությունից, «Կազմակերպումն», «Պաշտպանումն», «Հարձակումն» վերնագրերը կրող գլուխներից և վերջաբանից:

Նիկոլ Դումանն իր աշխատության սկզբում անդրադառնալով ազգամիջյան կռիվներին՝ գրում է. «...ազգային ընդհարումների ժամանակ, անկախ կողմերի քանակից ու որակից, անկախ նրանց հարաբերական ուժից, տուժում է ո՛չ թե մի, այլ անպայման երկու կողմը, միայն ա՛յն տարբերութեամբ՝ որ թույլ կողմը տուժում է ավելի շատ, իսկ ուժեղը՝ համեմատաբար քիչ: Եվ տուժում են ո՛չ միայն ֆիզիկապես ու տնտեսապես, այլ և կուլտուրապես»[3]: Այնուհետև նա խոսում է այն մասին, թե ինչու են ծագում հակամարտությունները և թե ինչպես կարելի դրանք կանխարգելել: Սակայն, այդուհանդերձ, նա եզրակացնում է. «բայց ինչ էլ լինի, թե՛ թշնամուն և՛ թե բարեկամին հարգանք ու պատկառանք ներշնչողը, դժբախտաբար, դեռ կոպիտ ուժն է: Եվ մի ազգ, եթե ուզում է մնալ հարգված, եթե չի՛ ուզում կորչել, պետք է լինի զենքի ընդունակ, միշտ պետք է լինի կազմ ու պատրաստ ինքնապաշտպանության համար...»[4]:

Ի սկզբանե նշենք, որ Նիկոլ Դումանն ինքնապաշտպանությունը դիտարկում է որպես երեք անքակտելի գործողությունների՝ կազմակերպման, պաշտպանության և հարձակման միասնական համակարգ:

Նա շեշտը դնում է գիտակցական ու կազմակերպված կռվի վրա. «Կազմակերպված ինքնապաշտպան կռիվը ըմբռնում է երևույթները լայն և պարզորեն, գիտակցում է իր նպատակը. նա գիտի իր ուժերը ճշտիվ և թշնամունը՝ մոտավորապես. նա կարգի է բերում իր բոլոր ռազմիկ ուժերը և մտցնում է նրանց մեջ կարգապահություն: Հարկավոր դեպքում շարժում է իր զորամասերը արագորեն, կենտրոնանում է՝ ուր անհրաժեշտ է, հարձակվում է՝ ուր հարկավոր է, պաշտպանում է՝ ուր կարևոր է»[5]:

Այսպիսով, նախաբանում հաստատելով կազմակերպված կռիվ-ինքնապաշտպանության անհրաժեշտությունը՝ Նիկոլ Դումանը անցնում է դրա ընդհանուր կանոնների սահմանմանը: Հատկապես կարևորվում են կազմակերպման ընթացքում «խորին գաղտնապահություն»-ը, որը զգալի չափով հիմնվում է կազմակերպման գործընթացում ընդգրկված տեղաբնիկների վրա. «անհրաժեշտ է, որ ինչպես կազմակերպվողները, նույնպես և կազմակերպողները լինեն անպատճառ տեղացիներ: Այս ձևն ունի

---

[1] Մանրամասնորեն տե՛ս Գ. Ստեփանյան, Բաքու քաղաքի հայության պատմությունը (պատմա-ժողովրդագրական ուսումնասիրություն), Ե., 2011, էջ 290-311:

[2] Տե՛ս Նիկոլ Դուման, նշվ. աշխ., էջ 38:

[3] Նույն տեղում, էջ 4:

[4] Նույն տեղում, էջ 7:

[5] Նույն տեղում, էջ 8:

ա՛յն առավելությունը, որ գաղտնապահությունը դարձնում է հնարավոր: Բացի դրանից, կազմակերպությունը մի ամբողջացած մեքենա է, որի կանոնավոր շարժումը կխանգարվի՝ եթե նրանից հանենք թեկուզ մի պտուտակ, իսկ դրսից եկած անհատը պատահական անձնավորություն է և միշտ հեռանալու ենթակա: Ծայրահեղ դեպքում, թույլատրելի է, որ կազմակերպողը լինի դրսից, իսկ կազմակերպվողը՝ երբեք»[1]:

Այնուհետև խոսվում է զենքին տիրապետելու հմտությունը կատարելագործելու ձևերի մասին: Ինքնապաշտպանության խումբը կարող է այդ իրականացնել անհատական թիրախային նշանաձգության և որսորդության միջոցով: Նիկոլ Դումանի համոզմամբ՝ «որսորդությանը առանձին տեղ ու նշանակություն պետք է տալ, որովհետև որսորդական վարժությունն է միայն, որ մարդուն մոտեցնում է պատերազմի արհեստին, ինչպես օրինակ՝ իր վրա կրել պաշարի ու ռազմամթերքի ծանրությունը, քայլել երկար, բարձրանալ լեռը, իջնել ձորը, պտտվել ճահիճներում ու անտառներում, վարժվել քաղցի ու ծարավի և բնության խստություններին, շուտ նշան առնելու և արագաձգության վարժություն, սպանելու արհեստ բոլոր ձևերի մեջ՝ ինչպես կանգնած, նույնպես փախած ու թռած ժամանակ՝ ամեն ուղղությամբ, կռիվ գազանների դեմ, կենդանի էակը դիակ դարձնելու սովորություն և այլն: Որսորդությունն ունի մի ուրիշ շատ խոշոր առավելություն, այն՝ որ որսորդը գործում է անկախ և ինքնուրույն, և դրանով նրա մեջ զարգանում է հնարագիտության ոգին և նախաձեռնությունը, որ չափազանց կարևոր է խաղաղ կյանքի մեջ և, մանավանդ, պատերազմի ժամանակ»[2]:

Ինքնապաշտպանությունը տարածքային ընդգրկման առումով բաժանվում է երեք մասի՝ ըստ քաղաքների, գյուղերի և շրջանների:

Քաղաքային պայմաններում ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար անհրաժեշտ է քաղաքը բաժանել ըստ թաղերի և ստեղծել երեք կարգի խմբեր.

ա) մնայուն խումբ, որը կռվի ժամանակ մնում է իր թաղում,

բ) թռուցիկ խումբ, որը ևս գործում է թաղում, սակայն, ըստ անհրաժեշտության, օգնության է նետվում կռվի թեժ հատվածները կամ թաղի վտանգավոր մասերը,

գ) շրջիկ խումբ, որը գործում է քաղաքի ամբողջ տարածքում, անհրաժեշտության դեպքում բաժանվում մասերի և զբաղվում սկզբնական դիմադրության կազմակերպմամբ ինչպես քաղաքի բազմամարդ հատվածներում, այնպես էլ ճանապարհների վրա[3]:

Նիկոլ Դումանի նախագծի համաձայն՝ «ընդհարման սկզբում ինքնապաշտպանության բոլոր ուժերը ամբողջ թափով պետք է ընկնեն թշնամու վրա և անմիջապես ճնշեն նրան: Իսկ եթե չի հաջողվում այդ արագ ճնշումը և կռիվը ստանում է պարբերական հարձակումների բնույթ, ինքնապաշտպանության ուժերը պետք է այնուհետև բաժանվեն երկու մասի՝ ցերեկվա և գիշերվա համար, որ ամեն մեկն իր հերթին՝ հսկի ու պատրաստ լինի դիմադրության»[4]:

---

[1] Նույն տեղում, էջ 9:

[2] Նույն տեղում, էջ 10:

[3] Նույն տեղում, էջ 11-14:

[4] Նույն տեղում, էջ 13:

Քաղաքի ինքնապաշտպանությունը սերտորեն կապված է շրջակա գյուղերի հետ՝ փոխադարձ օգնությունն ապահովելու տեսանկյունից: «Շրջակա գյուղերը կռվի ժամանակ կարող են օգնական խմբեր ուղարկել քաղաք, բայց նրանց գլխավոր գործը պետք է լինի՝ փակել ճանապարհները դրսից քաղաք մտնող թշնամու օգնական ուժերի առաջ»[1]:

Այնուհետև Նիկոլ Դումանը նկարագրում է քաղաքային իշխող կամ տիրապետող դիրքերի տարբերությունը դաշտում գտնվող նույնանման դիրքերից: Եթե դաշտում այդպիսիք են լեռը կամ բլուրը, որտեղից կարելի է վերահսկողություն սահմանել մեծ տարածության վրա, ապա քաղաքում միշտ չէ, որ ամենաբարձր դիրքը իշխող կամ տիրապետող է: Փողոցի լայնության այս կամ այն կողմում գտնվող թեկուզ և ամենաբարձր շինությունը իշխող չէ, քանի որ այդտեղից կարելի է վերահսկել միայն մինչև դիմացի շենքն ընկած տարածքը: Մինչդեռ փողոցի «երկարության ճակատի» վրա գտնվող շենքը եթե նույնիսկ ցածր է, էապես իշխող է, քանի որ այնտեղից հնարավոր է պարզ տեսնել և գնդակ արձակել փողոցի ամբողջ երկարությամբ: Կա ավելի հարմար դիրք՝ խաչմերուկի վրա գտնվող շինությունը, որտեղից կարելի է գնդակ արձակել երկու փողոցների երկարությամբ: Ըստ որում՝ նպատակահարմար է դիրքավորվել ոչ թե շինության վրա, այլ հենց փողոցում: Խնդիրն այն է, որ հորիզոնական արձակված գնդակը, եթե նույնիսկ դիպուկ չէ, փողոցի երկայնքով սլանալիս կարող է դիպչել թշնամու այլ զինվորների, մինչդեռ վերևից արձակված և ներքև սլացող գնդակը՝ դիպուկ չլինելու դեպքում, կդիպչի գետնին: Բացի այդ, շենքի վրա դիրքավորվելը նպատակահարմար չէ մեկ այլ պատճառով ևս: Գիշերը փողոցից վերև նայողը երկնքի ֆոնին կարող է տեսնել տանիքի վրա դիրքավորված մարտիկին, իսկ վերջինս՝ փողոցում գտնվող հակառակորդին՝ ոչ[2]:

Իսկ ինչ վերաբերում է խաչմերուկում դիրքավորված մարտիկին, ապա նա փողոցի երկարությամբ կրակ արձակելիս պետք է դիրքավորվի այնպես, որ փողոցի երկայնքով շարժվող թշնամուն երևա նրա մարմնի միայն մի փոքր մասը (կրակող ձեռքը, ուսը և գլխի մի մասը), իսկ մարմնի մեծ մասը գտնվի այդ փողոցին ուղղահայաց փողոցի վրա[3]:

Նիկոլ Դումանը ներկայացնում է նաև քաղաքային կռվի սցենարը՝ սկսած կազմակերպական աշխատանքներից մինչև հաղթական ավարտ: Ճիշտ ինքնապաշտպանվելու դեպքում թշնամին ստիպված դիմում է զինադադարի առաջարկով, և այդ դադարն օգտագործվում է հարձակում ծրագրելու համար[4]:

Գյուղերում ինքնապաշտպանությունը կազմակերպվում է մնայուն և թռուցիկ խմբերի կազմավորումով և գյուղի մերձակա իշխող բարձունքների վրա ինքնապաշտպանության մարտիկների դիրքավորումով: Իշխող դիրքերի բացակայության պայմաններում պետք է հատուկ ծածկապատ աշտարակ կառուցել գյուղի մերձակայքում և

---

[1] Նույն տեղում, էջ 14:

[2] Նույն տեղում, էջ 15-17

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում, էջ 17-18:

սահմանել օրինիբուն հերթապահություն: Եթե գյուղին մերձակա անտառ կա, ապա անհրաժեշտ է գյուղի և անտառի միջև որոշ ազատ տարածություն ստեղծել՝ թշնամու՝ գյուղին աննկատ մոտենալը կանխարգելելու համար: Գյուղական փողոցների մուտքերին՝ երկու հանդիպակաց պատերի տակ, անհրաժեշտ է ստեղծել երկու հողաբլուր, այնպես, որ մինչև կռիվը սկսվելը դրանց միջև երթևեկությունը շարունակվի: Իսկ կռվի ժամանակ հողաբլուրների վերևի մասերն արագ քանդվում են ու լցվում դրանց միջև գտնվող և երթևեկության համար բաց թողնված հատվածում՝ դրանով իսկ խոչընդոտելով գյուղ ներխուժած թշնամու շարժումը և վերածվելով դիրքի: Դիրքերի են վերածվում նաև գյուղի ծայրերին գտնվող այն տները, որոնք կռվի տեսակետից հարմար են դիտվում: Կռվի ամբողջ ընթացքում գյուղի մուտքերը գիշերուզօր պետք է վերահսկվեն, իսկ որոշ խմբեր՝ պտտվեն գյուղի շուրջը[1]:

Կազմակերպված ինքնապաշտպանական համակարգերով գյուղերը ձևավորում են գյուղախումբ կամ շրջան: Վերջիններից սահմաններում ընդգրկված գյուղերը պետք է համագործակցեն ինքնապաշտպանության և հարձակման ընթացքում[2]:

Նիկոլ Դումանը «Պաշտպանումն» գլխում ներկայացնում է գյուղական միջավայրում կռվի սցենարը գիշերվա և ցերեկվա ժամերին՝ սկսած կազմակերպական աշխատանքներից մինչև հաղթական ավարտ[3]:

Այնուհետև խոսվում է ինքնապաշտպանական ջոկատների հարձակման մասին: «Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանության» ձեռնարկի տեսանկյունից հարձակման նպատակը ինքնապաշտպանությունն ապահովելն ու ամրապնդելն է. «...ով որ կարծում է, թե այդ ապահովումը կարելի է ձեռք բերել՝ միշտ մնալով պաշտպանողական սահմաններում, նա չարաչար սխալվում է»,-ասում է Նիկոլ Դումանը[4]:

Հաղթանակի անհրաժեշտությունն ապացուցելու համար «Նախագծում» անդրադարձ է կատարվում թե՛ հաղթանակի և թե՛ պարտության հոգեբանական հետևանքներին. «Պարտությունը առաջ է բերում ոգու անկում, իսկ հաղթությունը՝ խրախուսանք՝ հետևանքներ, որոնք մեծ հոգեբանական դեր ունեն կողմերի վրա հաջորդ ընդհարումների ժամանակ»: Այս ճշմարտությունից ելնելով՝ պետք է խիստ զգուշավոր լինել և հարված հասցնելու համար ճիշտ ընտրել թշնամու թույլ տեղերը[5]:

Խիստ կարևոր է հարձակման նշանակությունը. «Հարվածել թշնամու այս կամ այն մասին՝ նշանակում է թուլացնել նրա ամբողջությունը: Եվ ինչքան հաճախ ու արագ կատարվեն այդ տկարացումները, այնքան ավելի շուտ քայքայման կմատնվի ամբողջությունը, որի համար պարտությունը կդառնա անխուսափելի»[6]:

Հարձակումներով թշնամուն միշտ պետք է պահել անակնկալ հարվածների սպառնալիքի ներքո, որպեսզի նա մնա իր տեղում և չկարողանա համախմբվել ու կենտրոնացված հարվածել: Եթե նույնիսկ թշնամուն հաջողվի հայկական պաշտպանության

---

[1] Նույն տեղում, էջ 18-22:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, էջ 26-28:

[4] Նույն տեղում, էջ 22:

[5] Նույն տեղում, էջ 31:

[6] Նույն տեղում, էջ 23:

մեջ թույլ տեղեր գտնել և վնաս հասցնել, ապա անհրաժեշտ է անպայման ու անհապաղ պատժիչ գործողություն իրականացնել, որպեսզի նա չկարողանա ոգևորվել «անպատիժ հաղթությունից»: Ըստ Նիկոլ Դումանի՝ հարձակումը դառնում է հրամայական և պետք է ուղղվի այն կողմը, ուր թույլ է դիմադրությունը[1]:

Բացի այդ, ընդհանուր հաղթանակի հրամայականից ելնելով՝ Նիկոլ Դումանն անընդունելի է համարում թշնամու որևէ «շրջան»-ի՝ հայերի վրա իրականացված հարձակողական գործողությանը չհակադարձելը: «Պատիժ հանցավոր շրջանին, ...պատժի ենթարկել հանցավոր շրջանը»,- այդպիսին է Նիկոլ Դումանի ռազմական հավատամքը[2]:

Հարձակումը Նիկոլ Դումանը ներկայացնում է երեք ձևով՝ ելնելով նպատակից.

ա) հարձակում՝ թշնամուն պարտության մատնելու համար,

բ) նախահարձակում՝ թշնամու հարձակումը կանխարգելելու համար,

գ) պատժիչ հարձակում՝ հայերին վնաս հասցրած թշնամուն պատժելու համար[3]:

Ամենից առաջ պետք է ճշտել հարձակման թիրախը՝ գյուղ կամ շրջան, այնուհետև հավաքել հնարավոր տվյալներն այդ գյուղի կամ շրջանի վերաբերյալ[4]:

Հարձակման թիրախն ընտրելուց հետո հարկ է ընտրել վերջինիս մոտակայքում մի հայկական գյուղ կամ ամայի վայր, և հույժ գաղտնի պայմաններում, մութն ընկնելուց հետո, նշանակված օրը և ժամին այնտեղ կենտրոնացնել բոլոր թռուցիկ խմբերը[5]:

Հարձակումը պետք է սկսել արշալույսին՝ շփոթություն և իրարանցում առաջ բերելու համար: Շփոթությունը կատարյալ դարձնելու համար անհրաժեշտ է ճանապարհին հրդեհել ամեն հնարավոր բան[6]:

Հարձակման ժամանակ՝ անկախ զենքի որակից, պետք է անպայման հաշվի առնել դրա կրակի հեռահարությունը, քանի որ մութ գիշերին հարձակվողին կարելի է նկատել միայն այն ժամանակ, երբ նա արդեն մոտեցել է, իսկ լուսնյակ գիշերին՝ բավական հեռվից: Ըստ այդմ՝ հարձակվողը, կախված մութ կամ լուսնկա գիշերից, պետք է ընտրի ճիշտ զենք՝ թշնամու առաջապահներին ժամանակին վտանգազերծելու նպատակով[7]:

«Նախագիծ»-ն ամփոփվում է հարձակման նկարագրությամբ, որը ռազմավարական մի ամբողջական համակարգ է: Այն սկսում է նախապատրաստություններից ու հմտությունների կատարելագործումից, իսկ ինքնապաշտպանությունը ներկայացվում է որպես երեք անքակտելի գործողությունների՝ կազմակերպական աշխատանքների, պաշտպանողական և հարձակողական մարտերի միասնական համակարգ:

«Նախագծի» վերջաբանն ինքնին համամարդկային բարոյականության մի դաս է: Մեծ հայորդին ցավ է ապրում այն բանի համար, որ կյանքը ստիպում է «արյան դասեր»

---

[1] Նույն տեղում, էջ 22-23:

[2] Նույն տեղում, էջ 24:

[3] Նույն տեղում, էջ 29:

[4] Նույն տեղում, էջ 29-30:

[5] Նույն տեղում, էջ 31:

[6] Նույն տեղում, էջ 32:

[7] Նույն տեղում, էջ 31-34:

պարունակող ձեռնարկ գրել, և հույս է հայտնում, որ մի օր իր «Նախագծի» մարտական պատրաստությունները կզարկվեն «այն նենգավոր կառավարությունների հրեշային ճակատին», որոնք թունավորում ու պատերազմների մեջ են ներքաշում ժողովուրդներին[1]:

* * *

Նիկոլ Դումանի «Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանության» աշխատությունը հիրավի հայ ռազմագիտական մտքի կոթող է: «Նախագծի» ստեղծման անհրաժեշտությունը նա բացատրում է այն իրողությամբ, որ հայությունը հայտնվել է բնաջնջվելու վտանգի առաջ: Ուստի՝ «այլևս տատանումը հանցանք է: Ամեն մարդ, որ զգում է դրության լրջությունը, պետք է ասի իր խոսքը, պետք է հորդորի, որ Հայոց այդ երեք գլխավոր հատվածները[2] պատրաստվեն ինքնապաշտպանության: Եվ նրանք՝ ճակատագրորեն պիտի պատրաստվեն»[3]:

Նիկոլ Դումանի տեսագործնական ձեռնարկը թեև կարող է որոշ չափով հնացած թվալ, սակայն անհրաժեշտ է դասեր քաղել, սովորել այն ամենից, ինչ մեզ ժառանգել են մեր հայրերը:

Արման Եղիազարյան

Պատմական գիտ. դոկտոր, ԵՊՀ պատմ. ֆակուլտետի սփյուռքահայության ամբիոնի վարիչ

[1] Նույն տեղում, էջ 38:

[2] «Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանության» ձեռնարկը գրվել է հայ ժողովրդի՝ 20-րդ դարի սկզբի երեք գլխավոր հատվածների համար, որոնք ճակատագրի բերումով հայտնվել էին Օսմանյան կայսրության, Իրանի և ցարական Ռուսաստանի տիրապետության ներքո:

[3] Նույն տեղում: